

Հազարամբ համարատա 2ար-
դեցին վե շառաւ իրքսի կիւն-
քի բաւ օրումուր Դր. 60
Սեքիլիի Բեշիւն բաշար իւն 85
Այր Երեմի 35
Սեքիլիի Բեշիւն բաշար իւն 85
Այր Երեմի 45
Բարա իւնքիի պիգե աշխտիւր
90 դուշուգ Բարա բուր 80
դուշուգ Բարա բուր 80
15 կիւնիւք Բիւսիւն 60 Բր. տըր:

ՄԵԶՄՈՒՄԻ

30 րարս

ԱԵՊԱԼ

30 րարս

مجموعة اخبار
بك اوغلى قسم جادهى نومرو 70
DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand Rue de Pera 65

Հազեթան միւթէալիկ խոսուսաթ իւն 8. ԹՕԼԱՅԵԱՆ միւրաճաթ օրումուր Է Խաւրէիւնէ՝ Պէյօղլուումա ծառաի քէպիւրաէ Ե. 65

ԱՍԻՔԱՆԷ 13 ՅՈՒՆԻՍ

ԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՅՈՒՆԻՍԵՆՔ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐԵԿԱՄԵՆԲԸ

«Il me semble qu'un mot de Montalembert, qui les (Jésuites) vénère hautement, efface plus de bouc que n'en peuvent jeter mille feuilles à cinq cents francs pièce. (1)»

LOUIS VEUILLLOT

Ինչ որ մարդկութիւնն ունեցած է երեք դարէ ի վեր ամենէն աւելի մեծ և ամենէն առաւել պատկառելի, Յիսուսեանց ի նպաստ եղած է միշտ երբ առաջին անգամ սկսած երկրային այլ և այլ կողմերն արեւել իրենց բարիքներն և ցոյց տալ վսեմ անձնութիւններն մը հրաշալի օրի-նակներն, գիտենք թէ ամեն ջերմ-ուանդն ժողովուրդներ, ամեն գի-տուն հոգեւոր եկեղեցականք, ամեն նէն բարեպաշտ իշխանք և թագաւորք իւրեւ երկրաւոր հրեշտակներ ընդունեցին զայն իրենց մէջ, և նո-քա որ լոյս միայն էին նոցա առա-քելաւորս ողւոյն և բազմաբնիկ աշխատութեանց, սրտազին թախան-ձանք կը խնդրէին տեսնել և վա-յել Սուտարանի այդ սրբաշունչ երկրաւոր պաշտօնեայնէր:

Թողլոյ անցիւղ դարերու մեծա-մեծ անձնաւորութեանց յիշատակու-թիւնն, որ բազմաթիւ են յոյժ, ինչ փառաւոր հերքումներ են սոյո մը-շակներուն դէմ Եւրոպայի մէջ, որ Պանայի, Ժոզէֆ Եւր Մէսգրի անուանքն որոց ոչ գիտութիւն կը պակսէր և ոչ ուղղամտութիւն և արդարաւորու-թիւն:

Անտարակոյս նախապաշարեալ է-ակներ չէին նաեւ անոնք, որ կը կոչ-ուէին կոմս տը Մոնդալաւալէս, Փը-րէտէրիք Օղանամ, գերակոմս Առ-ման տը Մըլէօն, Ուիլիամ Մոնթ, Օ'Գո-նէլ, Ռէգամիէ, տը Մոնիս, Մադ-Մաօն, Օլիւադ, Նիքոլա, որոց համար Յիսուսեանք մարդկութեան ամենէն պատուաւոր անդամքն են և եկե-ղեցւոյ ամենէն արդիւնաշատ գոր-ծիւններն:

Դարուս ամենէն ազնիւ նկարա-գիրներէն, ամենէն խորախորհուրդ-քաղաքագէտներէն և ամենէն փայ-լուն իմացականութիւններէն մին, տիեզերահաշիւի Տոնոգո Գոռոգէս, հրապարակագիր, ատենաբան, ան-

դամ Երեւոյտի և Սպանիոյ դե-պան ի Բարիլ (1844), այնքան մեծ սէր և համարում ունէր Յիսուսեանց նկատմամբ որ ինքն իսկ գիտաւո-րութիւն ունէր թողուլ զաշխարհ և մոնել այդ բարեբար ընկերութեան մէջ. անողորմ մահն հասաւ տարածամ և թոյլ չտուաւ իրագործել մի այդ-քան ազնիւ բաղձանք:

Պետական պանծալի անձնաւո-րութիւն մը որ այնքան մեծ քաղա-քացի եղաւ որչափ մեծ հաւատաց-եալ և որ թերեւս ամենէն գերաս-քանչ մարդն պիտի համարուի մի օր մեր դարուն, Կարսիա Մորէնո՝ է-քուադրոր հանրապետութեան առա-քինի նախագահն մեծ բարեկամ մ'էր Յիսուսեանց զորս կոչեց իւր երկիրը և որոյ ի պաշտպանութիւն հրատա-րակեց ջատագովութիւն մը, մին այն ամենէն նշանաւոր և պերճախօս վա-տագովութիւններէն որք երբեք գրուած չիւն ի նպաստ այդ սրբա-սէր Միաբանութեան: Ինքն որ ա-ռաջնակարգ գիտուն մ'էր միանգա-մայն և սիրահար ճշմարիտ յառաջ-դիմութեան, գերմանացի Յիսուսեան Հարց յանձնեց Գոլիթայի համալսա-րանն որ ընդ հուպ ծաղկեցաւ պրտ-ղալից պայծառութեամբ:

Մարդ մը որոյ անունն հաւատա-րապէս հուշակաւոր է հին և նոր աշ-խարհի մէջ և որոյ անձնուէր արիւն-թիւնն միայն կրցաւ հաւասարիլ իւր հաւատոյն զօրութեան, Լուի Վէյոյեօ, այս ամենէն բարձր ներկայացուցիչ եւրոպական լրագրութեան, ո'չ ա-պաքէն խոնդալաւո. հիացող մ'էր Յիսուսեանց և սոցա ամենէն կարգի ախոյեանն: Պէտք է կարգաւ դաշն հասկնալու համար թէ ինչպիսի բու-ցաշունչ չեղտերով և խորին համոզ-մամբ կը գրուատէ նոցա դարաւոր ծառայութիւններն, անասման բա-րիքներն, և թէ ո'րքան արդար զայ-րութիւ կը ձողիկ իւր հրաշքի գրիչն անպատիւներու, անարժաններու վոն-մակն, որ չէադրիւր ջիւն նետելէ նո-ցա անբիծ վեհափայլ ճակտին:

Կարգացէք նաեւ նշանաւոր անգ-ղիացի հեղինակ մը, Հ. Ուիլիամ Փա-պէր, որ բողոքականութենէ դարձած և Օնապուրիէն կրօնաւոր եղած է, և որոյ բազմաթիւ երկասիրութիւնք գլուխ-գործոցներ են աւետարանա-կան օժութեան և կաթողիկէ ճգնու-ղութեան (ascétisme). Իւր «Ամենայն ինչ վսեմ Յիսուսի» ոսկեղենիկ հրա-շալի մատենին մէջ ամեն անգամ որ կը խօսի Յիսուսեանց նկատմամբ, սրտաբուխ գովեստ մը կ'ընկերանայ այդ պատկառելի անուանց, և տեղ

մը կը համարձակի նոյն իսկ կոչել Յիսուսեանց նորընծայարանն «երկ-րաւոր գրախան» եղեմակորոյս մարդ-կութեան. Ուսումնասիրաց յայտ է թէ ժամանակէ մ'ի վեր լրջախոհ և գի-տուն Անգղիացիք մեծաւ մասամբ աշխուականք և համալսարանականք՝ գունդագունդ կը գիմեն ի ծոց մայ-րենի Ս. Եկեղեցւոյ: Ասոնցմէ շատեր չեն բաւականաւոր միայն փայլուն դոկտորներ չապելով Յիսուսեանց, այլ իրենց կենաց մեծագոյն երջան-կութիւն կը համարին անդամակցել այդ քրիստոնաւոր միաբանութեան: Եւ այսօր Անգղիացի Յիսուսեանք քա-ւառական մեծաւորներն սկսեալ մինչեւ աշխատակից եղբայրներն՝ նո-րադարձներ են ի բողոքականութենէ:

Բարձրատիման և իշխանադուն Ռուս մը, որ իւր կնոյ մահուանէ յետոյ կաթողիկէ և Բառնարասեան կը-րօնաւոր եղած էր, Հ. Նուվարօ, ա-մենալեւր համակրութիւն կը տածէր Յիսուսեանց նկատմամբ, և իւր կե-նաց ամենէն հանգիստաւոր պահուն անոնցմէ միոյն, - սքանչելին Հ. տը Ռալինեանի, - խորհուրդներով կը քաջաւերուէր, կը խրախուսուէր:

Ռուսիոյ իշխանական և մեծա-հարուստ ընտանեաց այլ անդամներ ոչ միայն կաթողիկէ եղան, այլ նաեւ Յիսուսեան կրօնաւոր, և Հ. Պալա-պին, Հ. Մարգինօֆ, Հ. Կակարին, այնպիսի անձնաւորութիւններ են որք գիտութեան, առաքինութեան, ան-կեղծութեան առջեւ անհամեմատ ա-ռաւել կը կշռեն քան սովորական ու միջակ հոգիներ:

Դեռ ո'րքան վկայութիւններ պի-տի կրնային բխաւր լերել, եթէ ու-գէնէր իշխել մի առ մի այն մեծ դէմ-քերն, որ կը կոչուին Միաբանաւոր Բի, Բլանդիէ, Տիւրանլու, Պէսոն, Ֆրէքէլ, Լաքուաէր, տ'Իւլսգ, Պո-նառ, Մոնապլէ, Ֆոէմին, Օլիվիէ, Տիւրբակիւն Եկեղեցւոյ այս արթուն հովիւներն և քաջարի զինուորներ, - ամենքն ալ տաղանդով և առաքի-նութեամբ մեծահամբաւ, - որք ի-րենց պատիւ համարած են միշտ գո-վել ու զնահատել Յիսուսեանց ըն-կերութիւնն, և հաշակել այն մեծ և փրկարար դերն զոր նա կոչուած է կատարել երկրի վրայ:

Նոյն իսկ խօսելով մեր փոքրիկ հասարակութեան մասին, ինչպիսի քաղցր և սիրելի անուններ չալտի կրնայինք լսել ընել:

Մեր վեհաշնորհ եւ Գերբընձանիկ Հոգեւոր Տէրն, որ յաճախ եւրոպա-կան գովեստից արժանացած է իւր մտաւորական խորիմաց կարողու-

թեանց համար, անկեղծ սիրող մ'է Յիսուսեանց և զնահատող այն մեծ ծառայութեանց զոր կը մատուցանեն նոքա եկեղեցւոյ և մարդկութեան:

Երկոյս ողբացեալ սրբաշունչ եկե-ղեցական մը, որ իւր բարուց քաղ-ցրութեամբ հայ Սալեղացի մ'էր և իւր խօսից օժութեամբն նոր ոմն Շնորհալի, հոգեւորս Կարապետ Արք. Սարանեան, նախկին աշակերտ Յի-սուսեանց, գիտեն իւր մտերմութե-ն ո'րքան հիացմամբ կը խօսէր իւր ա-ռաքինափայլ դաստիարակաց նը-կատմամբ, և թէ ինչպէս օրինակ կ'ընծայէր զայնս առաքելաշնորհ անձնութիւններն, անխնայ ե-ռանդան, բարմահմուտ գիտու-թեան:

Կարապետ էֆ. Գարագաշ, զոր կրնանք կոչել Հայութեան Գոնդ տը Մէօն իւր սակեղէն լեզուին և իւր ջիւղեւանից հաւատոյն համար, և որ ստուգիւ սիպար մ'է առ մեզ հանձարաշատ գրագիրի և լուսամիտ քաղաքացւոյ, կը լինէր թէ քանի-սիրաղեղ յարգանք խօսած է մեզ բազմիցս Յիսուսեան Հարց մասին, և ի մասնաւոր յիշատակած այն բա-րիքն զոր կը սիրեն ամենուրեք ի-րենց գիտական և խմատասիրական գիրքերով և հանդէսներով:

Բայց չափազանց երկար պիտի լի-նէինք, եթէ յիշէինք մի առ մի Մը-լիթար Արքայէ և Գրիգոր Բ. Ե սկս-եալ մինչեւ Հ. Աղեքսանդր Պալմեան, Հ. Յովսէփ Գաթրճեան և մինչեւ երկնահամեմարն Հ. Գեւորդ Սելջան՝ բոլոր այն մաքրազարդ և պատկա-ռելի գէմքերն որք բանիւ կամ գոր-ծով ցոյց տուած են իրենց բարե-կամութիւնն և մեծարանք Յիսուսի սիրելադոյն ծառայից:

Ներուի՝ մեզ աստ անձնական յի-շատակութիւն մը. - Երբ 1891 ին կը վերադառնայի Ստանայէն, փափա-քեցայ տեսնել ի Զմիւռնիա մեր տոհ-մային գրականութեան ամենէն բարձր ներկայացուցիչներէն մին. - Ներհուն և ալեղարգ մատենագիրն հետ խօսած ժամանակս զարմացմամբ և ցաւօք միանգամայն ըսի թէ «այդքան զըր-պարտեալ Յիսուսեան Հարց սրբու-թեան և գիտութեան դիւցալներ երեւցան ինձ»: «-Ճշմարիտ է, բաւ մեծայարգ խօսակիցս, Յիսուսեանց Միաբանութիւնն շատ մեծ և շատ առաքինի անձնաւորութիւններ ծնած է:» Մատթէոս Մամուրեան էր որ կը վկայէր այսպէս:

Երբ հասայ ի Պոլիս, բազմերախ Դաստիարակիս, Ռէթէոս էֆ. Պէր-պէրեանի միւնիսթր տպաւորութիւնս

(1) Les Libres Penseurs, p. 472.

Մուսնաբեղմնէն կէլինճէ, վազաւ պիւ
կիւք պիր վաղըւ իւսպէլի եօթ իւէ տ
էլան միւստատմէլէլէ տէվամ օլունուեօր
վէ պաղը չէհրլէր Ամէրլիալըլարա քիւ
լիւ օլունտուպարը հալտէ, տիկիլէլի
մուգալէմէլէ կոտիօր Անհաչ Իսքանիսի
միւթարեքէ իւսընը թալէպ իվմէք իւ
քէ օլուղը Մատրիտտէ չաի օլմուշ տոթ
Իսքանիա՝ Գուսպըլարատան արդու իս
լէքիլի Իսքանիսիաւ ալտէթ Իտէպիլէն
լէքիլի իւան իվմիշ աքիւ

8

[illegible]

— Ի՞նչ քաղաք խոսերիմ, ես արդո՞ւստ ասպա՞հ
կեօրհաշիւիւնք :

• Ինչպե՞ս է ծագել անունը :

Յանու Էմբ Իթալի :

